

## ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 6 Հոկտեմբերի, 2008

ՀՅԴ Բիւրոյի անդամ, դոկտ. Վիգէն Յովսէփեանը անցեալ շաբաթավերջին անդրադառնալով վերջին ամիսների քաղաքական իրադարձութիւններին, մասնաւորաբար հայ-թուրքական յարաբերութիւնների ընթացքին, յայտարարել է, որ «Հայաստանը իր առաւելագոյն զարգացումը կարող է ապրել միայն, եթէ բարիդրացիական յարաբերութիւնների մէջ գտնուի իր հարեւան երկիրների հետ: Այսուհանդերձ,- շեշտել է նա,- բարի դրացութիւնը սուտ բան է, եթէ այն հիմնուած չլինի փոխադարձ յարգանքի վրայ»: Մանրամասնելով իր խօսքը, Բիւրոյի անդամ ասելացրել է, որ «սուտ բան է եւ չափազանց մակերեսային տրամաբանութիւն՝ Թուրքիան իբրեւ բարիդրացիական տրամադրութիւններ ունեցող հարեւան ընդունելը, եթէ այդ երկիրը շարունակում է անարգել հայ ազգի արժանապատուութիւնն ու պատմութիւնը՝ դժելով Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը: Պատկերացրէք, օրինակ, որ Իսրայելը բնական յարաբերութիւն մշակեր որեւէ երկրի հետ, եթէ այդ երկիրը դժեր Հոլոքոսթի փաստը, էլ ուր մնաց, եթէ դժողը լինէր նոյն ինքը՝ ոճիրը գործադրողը»: Իսկ ինչ վերաբերում է թուրք եւ հայ պատմաբանների յանձնաժողովի առաջացմանը, որը իբր թէ պիտի քննի Յեղասպանութեան հետ առջուող հարցերը, դոկտ. Յովսէփեանն ասել է, թէ. «Տարիներից ի վեր առաջարկում են այսպիսի յանձնաժողովի տարբերակները, որպէսզի դանդաղացուեն Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ այդ ուղղութեամբ տարուող աշխատանքները: Ժամավաճառութիւն է եւ պետք չէ թակարդի մէջ ընկնել: Եթէ նման յանձնաժողով պիտի գայ եւ քննարկի Յեղասպանութեան հետեւանքները եւ փորձի հատուցման միջոցներ որոնել, ապա շատ լաւ բան է: Իսկ եթէ այն պիտի քննի Յեղասպանութեան իրողութիւնը եւ այն խնդրոյ առարկայ դարձնի, ապա դա խեղկատակութիւնից շատ ավելի է. եւ դա իսկապէս, որ հարուած է բոլոր նրանց, ովքեր մինչեւ այսօր ճանաչել են Հայոց Յեղասպանութեան փաստը, կամ գործել են ի խնդիր Հայոց Յեղասպանութեան ճանաչման», - ընդօժել է ՀՅԴ Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգէն Յովսէփեանը:



ՀՅԴ Փասադենայի Հայ Դատի Յանձնախմբի պատուիրակութեան անդամները Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան անդամ Ադամ Շիֆի հետ վերջերս ունեցած հանդիպման ընթացքում, շնորհակալութիւն են յայտնել կոնգրեսականին ամերիկահայ համայնքի նկատմամբ իր ցուցաբերած մշտական պաշտպանութեան, մասնաւորաբար Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ թիւ 106 բանաձեւի ձեւակերպման եւ այն 2007 թուականին Կոնգրեսին ներկայացման համար: Իր հերթին կոնգրեսական Շիֆը վերահաստատել է իր պաշտպանութիւնը, ասելացնելով, որ ամէն ճիգ կը գործադրի, որպէսզի 106 բանաձեւը վերջնականապէս վաւերացուի Միացեալ Նահանգների Կոնգրեսի կողմից:



Կիրակի, Սեպտեմբերի 28-ին, Լոս Անջելոսի «Hall of Liberty»ում, ավելի քան 1000 հիւրերի ու ՀՄԸՄ-ականների մասնակցութեամբ նշուել է ՀՄԸՄ-ի Գլխաւորի «Արարատ» մասնաճիւղի հիմնադրման 30-ամեակը: Միջոցառմանը ՀՄԸՄ-ի Արեւմտեան շրջանի Շրջանային վարչութեան անունից ելոյթ է ունեցել Սթիւ Արթինեանը, նշելով, որ ՀՄԸՄ-ի Գլխաւորի «Արարատ» մասնաճիւղը համարում է միութեան կարեւորագոյն մասնաճիւղերից մէկը, որը հայեցի մթնոլորտում սպասարկել ու սպասարկում է հազարաւոր երիտասարդների: Ողջոյնի խօսքով հանդէս է եկել նաեւ Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փոլ Գրիգորեանը, որը դրուատել է ՀՄԸՄ-ի դերը նահանգի զարգացման ու առաջխաղացման գործում: Միջոցառմանը գործադրուել է նաեւ գեղասարուեստանալն ծարգիր:



«Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան Գլխաւորի կամաւորները Սեպտեմբերի 27-28-ի շաբաթավերջին Նեւադայի նահանգում մասնակցել են Միացեալ Նահանգների դեմոկրատական կուսակցութեան նախագահական թեկնածու Բարաք Օբամայի

ընտրապայքարի օգտին տարուող աշխատանքներին: Օբամայի ընտրարշաւի ամերիկեան պատասխանատուները ողջունել են «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան ցուցաբերած յատկանշական օժանդակութիւնը: Նշենք, որ «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան անդամները իրենց գործուն մասնակցութիւն են բերում նաեւ այլ նահանգներում, որոնց թւում՝ Կալիֆորնիայում, Պենսիլվենիայում, Միչիգընում եւ Վըրջինիայում ձեռնարկուող քարոզարշաւներին: Կազմակերպութեան աշխատանքների մասին յաւելեալ տեղեկութիւններ ձեռք բերելու համար կարելի է այցելել [www.armeniansforobama.com](http://www.armeniansforobama.com) համացանցային կայքէջը:



«Հայ Կանանց Միջազգային Ընկերակցութիւն» անուամբ կազմակերպութեան Լոս Անջելոսի մասնաճիւղը անցնող շաբաթ յայտարարեց, թէ ուսանողական կրթաթոշակների յատուկ հիմնադրամ է ստեղծել՝ Գլենդէլի Հանրային Քոլէջում: Կրթաթոշակի մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար կարելի է կապուել «Հայ Կանանց Միջազգային Ընկերակցութեան» Լոս Անջելոսի մասնաճիւղին (562) 943-1081 հեռխօսահամարով:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations@ARF1890.com](mailto:PublicRelations@ARF1890.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: